

(83). որով ապաշխարութեան օրինական մասն էր պահեցողութիւնը, գործադրուած ղեռ Տաթեւացւոյն օրով եւս (Քրդ. ձմր. 245): Մանդակունին ալ կը յանձնարարէ մեղաւորաց «զպնդոշիւն պահոց... խորզով եւ մոխրով» (147), որ յայտնի չէ՝ օրինականն է թէ կամաւոր: Բայց հանդերձից այդ խստութիւնը, յատուկ նաեւ ուրիշ պահոց (աստ, 412, '20), կար Հրէից քով եւս, որոնք իրենց ապաշխարողական պահքերը կ'անցնէին քրձով ու մոխրով (Գ. Թագ. ԻԱ, 16, 27. Նեեմ. Թ, 1. Ա. Մակ. Գ, 47):

Բ. Երբեմն թագաւորի մը մեղաց համար ժողովուրդը պահք կը պահէր: Երբ Արշակ հիմնեց անօրէն Արշակաւանը, մեծն Ներսէս զայն ապաշխարութեան յորդորեց, ըսելով՝ թէ հրաման տանք բոլոր աշխարհին՝ փոխանակ քեզ «ի պահս եւ ի խնդրուածս լինել» (Փաւս. 111): Այսպէս եւ Յեզարէլ պահել հրամայեց ժողովրդեան՝ Նաբովթայ վերագրուած սուտ հայհոյութեան համար (Գ. Թագ. ԻԱ, 9, 12):

Գ. Նախնեաց մէջ յիշուած կան ինչ ինչ ապաշխարողական պահքեր, որոց գործածական լինելուն կը տարակուսիմ: Այսպէս Ալաւկայ որդին կանոնադրած է՝